

ՓՈՒՆՁ

ԹԻԻ 731

ՇԱԲԱԹ

1872 ՅՈՒԼԻՍ 22

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կթողումը այս անգամ Գերմանիոյ Ռուսիոյ և Աւստրիոյ կայսերաց մտակայ տեսակցութեան վրայ պայազայ քաղաքականութեան նկատմամբ դուշակութիւններ գրել: Կթողումը գաղղիացւոց և իւրեանց ազգային ժողովոյն հրճուանքն ու ծափահարութիւնները դրամական այն մեծ համարման համար զոր աշխարհ կրնայէ գաղղիական ազգին անոր ընել ուղած 3 միլիար փոխառութեան աւել 40 և աւելի միլիարներու ստորագրութիւն տալով: Առանց երբէք նայելու անոր արդի անկեալ և նկուն վիճակին:

Կթողումը ասանք երկարօրէն նշանակել և օտար երկրաց մէջ վերջին օրերն պատահած քաղաքական ամեն զէպքեր:

Ղան զի մեր բնական երկրին կառավարութեան մէջ այս շարժու տեղի ունեցած պաշտօնական մեծ փոփոխութիւն մի յինքն կգրուէ համայն Տաճկաստանի խորին ուշադրութիւնը:

Զորե քարթի առաւօտէն հետէ կը խայտան մայրաքաղաքիս և համօրէն Տաճկաստանի ամեն կարգի ժողովուրդը կառավարութեան գործոց գլուխը Մահմուտ փաշայի տեղ բարձրագատիւ Միտհաթ փաշան տեսնելով: Նորին բարձրութեան պաշտօնակալութեան առաջին օրը մայրաքաղաքիս մէջ տեսնուած գոհունակութեան ցոյցերը ոչ երբէք տեսնուած են եւրոքրօսական ուրիշ փոփոխութեանց ատեն:

Ոչ սակաւ նշանակութեան արժանի է մայրաքաղաքիս երեւելի դեպքանաց ալ անմիջապէս Բ. Դուռը ելնելն ի շէնորհաւորութիւն Նորին բարձրութեան:

Այս գոհունակութեան և համակրութեան ցոյցերուն անարժանի Միտհաթ փաշան: Որովհետեւ իւր վարած բոլոր պաշտօններուն մէջ հայրենասիրութիւնըն ու ժողովրդասիրութիւնը միայն չըթանցը մէջ առած չէ, այլ արդեամբ հանդիսացուցած է: Ժողովրդեան բարեկենդանութիւնը և անդորրութիւնը, երկրին յառաջադիմութիւնը նորա խորին ուշադրութեան և փոյթեռանդ ջանից առարկայ եղած են: Միտհաթ փաշայի ժողովրդասիրութեան անսուտ վկայք են մայրաքաղաքիս, Դանուբի և Պաղտատի մեծ կուսակալութեանց մէջ նորա ըրած գործերը: Միտհաթ փաշայ է հիմնադիր Պոլսոյ Էմիլիէթ Սանտըղիին, Արուեստական դպրոցին և ուրիշ այսպիսի ամենակարեւոր հաստատութեանց, յորոց օրինակ առին քանի մի գաւառք, և այժմ արդիւնաւոր վիճակի մէջ կը գտնուէին և իւրեանց նպատակին հասած կլինէին: Եթէ Միտհաթ փաշայ

զի գործայն միջոցոց զոյլ միւս գոչափաբեր հեռանալ մայրաքաղաքէս և իւր աչքը հեռացունել անոնց վրայէն:

Նախանձը նախորդ և նախկին եպարգոնները գրգռեց զՄիտհաթ փաշա հեռացունել մայրաքաղաքէս, բայց վերջապէս ժամանակը յայտնեց ամեն բան և մեր օգոստափառ Սուլթանը բարձրացոյց զանի այն աստիճանին, որում արժանի է բոտ ամենայնի:

Նախորդին Մահմուտ Նետիմ փաշայի մեծ եպարգոսական պաշտօնակալութեան ընթացեց վրայ այժմ դիտարկութիւններ ընել աւելորդ կհամարիմք, Բաւական է ըսել, թէ ի սկզբան ժողովրդասիրութեան և անաչառութեան ցոյցեր, խոստումներ և յայտարարութիւններ ըրաւ, բայց արդիւնք մը չունեցաւ, ամեն օր պաշտօնական փոփոխութիւններ եղան, շատ կուսակալներ դեռ իւրեանց պաշտօնատեղին չհասած, կամ հաղիւ իւրեանց պաշտօնատեղին տեսած յանկարծ փոխուեցան:

Բայց ձգեմք անցեալը և մաղթեմք որ երկրին բարձրագատիւ Միտհաթ փաշայի աշխարհաչէն առաջադրութիւններն ու խորհարդներն յաջողէ: Նորին բարձրութեան բեռը շատ ծանր է երկիրը բարեկարգութեան պէտք ունի, ժողովրդեան անդորրութեան համար շատ աշխատութիւն պէտք է: Կյուսանք, որ օգոստափառ Սուլթանը երբէք չզղջար այս ընտրութեանը մէջ: Բարձրագատիւ Միտհաթ փաշայի ընտիր ընտիր բարեմասնութիւնները կարող են Նորին կայսերական վեհափառութեան բաղձանքն ի գլուխ տանել, որ է յառաջադիմութիւն և զարգացումն Թուրքիոյ, և անդորրութիւն և բարեմասնութիւն Թուրքիաբնակ ժողովրդոց:

Վիէնայէն օգոստ. 1 թուով եկած հեռագիր մի կճանուցանէ, թէ բարձրագատիւ Միտհաթ փաշայի եպարգոսական պաշտօնակալութեան լուրը հոն հասած ատեն, մեծ գոհունակութեան պատճառ եղեր է: Տեղական լրագիրք սկսեր են Նորին բարձրութեան արժանեաց և յատկութեանց վրայ գովեստիւք խօսիլ և երանել զթուրքիա:

Նոյնպէս իլվիրէն եկած հեռագրէ մի կիմանամք, թէ այս փոփոխութեան աւետեաց վրայ, տեղւոյն ամեն ազգէ հասարակութիւնք և եւրոպացիք մեծապէս ուրախացեր են, և գրեթէ հանդէսներ կկատարեն եզեր:

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Մեր գաւառաքնակ ազգայնոց աւել տեղով բարձրագատիւ Միտհաթ փաշայի Տաճկաստանի կառավարութեան դործոց գլուխն անցնելն քաջալերութեան հրաւեր կկարդամք:

Ահաւասիկ պատեհ առիթ է իւրեանց վշտաց ու ցաւոց դարման գտնելու համար: Բայց գիտնալու են թէ իւր ցաւերը չյայտնող հիւանդին դէպ ուղարկման չկրնար ընել բժիշկն, որչափ ալ փորձ ու ճարտար և յօժարամիտ ըլլայ:

Մեր գաւառացի ազգայնք թող ապահով ըլլան բարձրագատիւ Միտհաթ փաշան չըթամքք միայն չտրեր ժողովուրդը, կգործէ և ժողովրդեան օգտին ու շահուն համար պէտք եղած միջոցներն ի գործ կդնէ: Այսպէս վարուած է իւր բոլոր պաշտամանց մէջ:

Բայց դարձեալ կըսեմք, գիտնալու է բարուք ի գործ ածել այս պատեհ առիթը:

Գաւառացիք, աներկիւղ ու համարձակ յայտնեցէք ձեր ցաւերը, բոլորք բարձէք ձեր նեղաց ու հարստահարկաց դէմ, օրինաւոր միջոցներով բարեցէք, դատ բացէք:

Օրինաւոր միջոցներով բոլորեցէք կըրեմք, որովհետեւ կըսեմք թէ ձերն շատերը իւրեանց դատերը կկորսնցունեն, չգիտնալով թէ դատական գործոց մէջ ինչպէս վարուելու է: Կամ բաստանեն մէկը, և արդարեւ յանցաւոր ու պատժելի է ամբաստանեան, բայց կարդարանայ, որովհետեւ ամբաստանողք չեն կրնար իւրեանց դատը վարել, կամ երկիւղիւ ետ կենալով և կամ տգիտութեամբ իւրեանց ըսածն ու ըրածը չգիտնալով:

Ոմանք հետաքրքիր են իմանալ, թէ փունջը ինչո՞ւ չմիջամտեր Սամաթիոյ Ագապեան վարժարանի խնդրոյն, որ դաստիարակութեան խնդիր կհամարուի:

Արժան կհամարիմք ծանուցանել այսպիսի հետաքրքիր անձանց, թէ փունջն քանի մի շարաթ յառաջ յիշեալ խնդրոյն նկատմամբ իւր կարծիքն յայտնեց: այն է խնդիրը քննել պէտք է բայց ոչ Սամաթիոյ թաղական խորհրդոյ անկ էր, քանի որ նորա անդամաց ոմանք Ագապեան վարժարանի հակառակորդ կամ նախանձորդ կհամարուին:

Այս կարծիքէն զատ առայժմ ուրիշ կարծիք չեմք կրնար ունենալ, քանի որ պաշտօնական կերպիւ քննութեան գործին վրայ տեղեկութիւն մի չկայ: Միայն թէ այս առթիւ մեր ցաւը կյայտնեմք, աղկանց վարժարանի մը այսպէս չարաչար ամբաստանուելուն համար, որ մեծ գայթակղութեան պատճառ եղած է հասարակութեան:

Յաւով կարգացինք Շապին - Գարահիսարէն յուրիս 13 թուով գրուած նամակ մի: Նամակին նիւթն է տեղոյն դասատուին ընթացքը: « Շապին-Գարահիսարցին, կրսէ, ամենամեծ ուրա- « խութեամբ ողջունեց այս դասատուին « գալուստը, գրեթէ բոլոր քաղաքը դը- « զըրգեցաւ, և ազգային դաստիարա- « կութեան յառաջադիմութեան համար « մեծ յոյս ունեցան ամենքը: Մակայն, « շատ չանցաւ ի դերեր ելին ամենայն « ակնկալութիւնք: Դասատուն սկսաւ « ըստ արժանեոյն չկատարել իւր պաշ- « տօնը, միայն ուտել խմել ու ապրին « անդին քառութեան պտրտիլ, և վերջա- « սկէս իւր պաշտօնին ու պարտաւորու- « թեանց բոլորովին հակառակ ընթա- « նալ »:

Նամակագիրն այս տեղեկութիւնը տալէն յետոյ, դիտողութիւն կրնէ թէ Պօլսէն գաւառները դասատուութեան երնող անձանց մէկ մասը դասատուութեան պաշտօնին պատրաստութիւն չու- նին, և ոմանք ալ բոլորովին իւրեանց քնակն ու անձը պարարելու ելած են բոլորովին անհոգ լինելով ազգային ման- կրութեան դաստիարակութեան ու զար- գացման համար, որով զանոնք բարոյա- պէս սպանանելու անթողի ոճիրը գոր- ծած կրլլան: Նամակագիրն այս դիտող- ութիւնը չեմք կրնար անիրաւ դատել: Արդարեւ գաւառները իբրև դասատու երնող անձանց շատը կամ բոլորովին ան- հոգ և կամ անուսուսն են:

Ինչ է այս անկարգութեան պատճա- րը. - Պօլսոյ Կեդրոնական վարչութեան շատ անգամ յետուսնակաւ խորհուրդ չունենալն, որով անուսն կանուխ ել- նողն դասատու և փոխտօմայ կրառնայ, և վերջապէս կերթայ կիսայ դաւառնե- րը, և փոխանակ ուսման սերմանց խը- ձովութեան որմն կցանէ: Կյուսամք թէ նորընտիր Ուսումնական խորհուրդը այս մասին մեծ հոգ կտանի և գաւա- ռական դասատուայ ընտրութիւնը ինք կրնէ, ծանուցանելով որ դասատուի պէտք ունեցող գաւառն ուղղակի Ու- սումնական խորհուրդն դիմէ:

Գալով Շապին-Գարահիսարի դասա- տուին որոյ համար մեծապէս կգանգա- տի յարգոյ նամակագիրն, չեմք կրնար մեր կողմանէ դիտողութիւն մ'աւելցը- նել, որովհետեւ չեմք գիտեր ո՞վ ըլլալն նամակագրին կողմանէ յականէ յանուա- նէ նշանակեալ չլինելուն պատճառաւ: Մակայն, անհրաժեշտ պարտ կհամար- ըմք մեզ, Շապին-Գարահիսարի գերա- պատիւ Ս. Առաջնորդ Հօրէն և տեղոյն ազգային մեծարգոյ վարչութիւնէն խընդ- րել, որ յօգուտ ազգային մանկուոյն բարեհաճի սնայառաքար քննել իմա- նալ և վարժարանէն դուրս հանել, եթէ արդարեւ կայ հոն մայրաքաղաքէս գը- նացած անհոգ ու պարտազանց դասա- տու ըստ ծանօթութեան յարգոյ նամա- կագրին:

Հրատարակութեան արժանի համարեցաք հեռաւեալ նամակը:

1872 յուրիս 14. Ամասիա.

... Խմբագիր

Սնցեալ շարթուան փոզի (199) թը- ուայն մէջ մեր Ամասիոյ և Մարդուանու

ինդրոյն նկատմամբ ստույթեամբ լի նա- մակ մը հրատարակուած էր: Պարոն նա- մակագիրը իր նենդամութեամբը Գեր- Եղեսեանի վրայ յանցանք մը բեռցնե- լու համար, անցեալ պատմութիւն մը ը- րած է, թէ (այն ինչ ժողովի մէջ միա- կանի աղայի մը նշխար կուտայ բաժնե- լու սրբազանը): Իրօք այդպէս եղած է, բայց ինչ յանցանք Սրբազանին, քանի որ այն լիւր չորպաճին կյանդին իր պաշտպանակիցը եղողին մէկ աչքով ըլլա- լը ընդդէմ մարդկութեան նախատելու, առարկելով թէ « մէկ աչքով մարդ մը բաժին չկրնար ընել »:

Այն ատեն յիշեալ միակեանի աղան հրապարակին մէջ նախատուելուն չհան- դուրժելով, կպատասխանէ, թէ « Եղ- բայր, մէկ աչքով ըլլալս ինձի յան- ցանք չէ, քանի որ քեզի պէս դատա- րանները սուտ վկայութիւն ըրած չեմ »: յիշեալ նենդամութիւնը չորպաճին (որուն նենդամութիւնը հաստատելու պատ- րաստ եմք), թէպէտ կրողքէ սուտ վկայութիւն չեմ ընդունիր, բայց դա- տասխազը երբէք յետս կոչում չընելով կպնդէ սուտ վկայութիւնը հաստատելու համար, ինչպէս որ վերջը Ազգային Ժո- ղովի մէջ իրեն սուտ վկայութիւնը վրձ- ուուած, և ատենագրութեան սոմարին մէջ ինքն ալ ստորագրած է, իրեն սուտ վկայութիւնը (որ այժմ պատրաստ է Ազ- գային դիւանատան մէջ յիշեալ սուտ վկայութիւնը վաւերացած ատենագրու- թեան սոմարը):

Պարոն նամակագիր, դոնէ յիշէ Ս. Գաւթի այն խօսքը թէ « Աստուած իրը- րեսցէ զոսկերս մարդահասոցից », և թող բաւական ժամանակէ ի վեր փող պատուական լրագրոյ միջոցաւ ամբողջ դժոխք մը լեցնելու չափ հրատարակե- լու յանդուրծութիւնը, Պարոն Բէլէքեան, մի խաբու իր այն յանդուրծ չոր- պաճիին եկեղեցոյ բանկալէն ամսական թոշակաւ ի զուր քու որովայնդ պարա- րելուն, իր գոռոզ կամացը խոնարհ խըն- կարկու և իրեն շղթքորթ հանդիսանա- լուդ համար յիշէ անգամ մը քու դա- սատուիդ Միւսս պատուելին նոյն չոր- պաճիէն չարաչար դանակոծուիլը, և դպրոցը խանգարելու յանդուրծ, բայց ի չնորհս ընկերութեան բարեջան անդա- մակցաց, ինքը իր վեցամսեայ եկեղեց- պանութեան պաշտօնէ անմիջապէս դադ- րեցնելով, ազատեցին դպրոցը նորա գի- շաութի ճիւղաններէն, բայց և այնպէս իր յանդուրծ գաղտնի մեքենայադործու- թեամբը վերջապէս յաջողեցաւ յիշեալ պատուելին անտեղի պարտութիւննե- րով հալածել, և դպրոցը խանգարելու լաւ գիտցիք Պարոն Բէլէքեան, ազան կամ անագան յոյժ պիտի պղծաք, քու քսակը պարարող մի քանի չորպաճիներ- րու քմացը համաձայն շղթքորթութեամբ և հայրենեայդ իրաւանցը դէմ չարա- չար կուռելուդ համար:

Պարոն նամակագիրը ամենայն ստու- թեամբ կհամարձակի ըսելու թէ « Մ. Կարապետ աղա Զատիկեանը կեդրոնա- կան դպրոցի վեց տարեկանի համար հինգական հազար գահեկան խոստա- ցաւ ». այդ խոստումը կարծեմք միայն Պարոն նամակագրի իբր խոստովանու- թիւն ըրած է: Արդարեւ Մ. Կարապետ

աղա Զատիկեանը արդի մեղքը քաւե- լու համար, պէտք էր մեծ գումար մը խաչերու փոխարէն հատուցանել, բայց ինքն ալ կյիշէ որ 30,000 զուրուչի գու- մար մը կարող չէ իւր արդի մեղքերը քաւելու, անոր համար այդպէս խոստ- մունք մը երբէք ըրած չէ. զարմանա- լի շղթքորթութիւն, չյիշէր պարոն քէլէքեի նամակագիրը, թէ Գեր. Ե- դեսեան Սրբազանը քանի քանիցս Ընդ- հանուր Ժողով կազմելով սուսյարկեց Ամասիոյ օրինաւոր կեդրոնական դպրո- ցի պէտքը, յիշեցնելով Ազգին մատաղ մանկտեաց օտար Ազգի դպրոցը դիմել- նուն ապագայի վտանգը, և յիսունի չափ ալ աղքատիկ զաւկներ առ ի չգոյն օրինաւոր դպրոցի փողոցները ու շու- կաները անպէտ թափառելը. կեդրոնոր նամակագիր, ինչպէս կ'իտու խիղճը (եթէ ունի) ըսելու թէ « սաստիկացի- ները դպրոց չափող չեն ». չեմք յիշեր որ Գեր. Եղեսեան Սրբազանի Ա- մասիոյ օրինաւոր դպրոց չունենալուն թէ նիւթապէս և թէ բարոյապէս Ազգիս վտանգի մէջ ըլլալը յիշեցնելով, դառն յորդորներով, սրտամտիկ ատենաբան- նութիւններով նոցա քարացեալ սրտե- րուն կտղաչէր. ո՞չ ապաքէն այդ դի- ցաղն սէվասիացիներդ էին, Սրբազան, կամայ է մի, ակամայ է մի » պօռալով, ամեն ազգասէր սրտերն ալ դառն կրա- կըծանօք վշտացնող, և հանդանակու- թեան խանգարման պատճառ եղողը, որ և Գեր. Սրբազանը դպրոցի հաստա- տութեանը ամեն կողմանէ անկարող ըլ- լալով, ամեն եկեղեցեաց գործածակա- նէն աւելորդ եղած, մեծ մասամբ ար- դէն հինցած ու կոտորած աւօթները հանրեցնելով անշարժ կայուածներու յատ- կացուց, որուն քառորդ մասը այժմ օ- րինաւոր կայուածի տրուած մինչև 18- 20 օսմանեան լիւր հասցի կրերէ: Գիւ- ըին է մակարերել թէ եթէ ամբողջ գումարը կալուածի տրուի, այն ատեն որ աստիճան Ամասիան դպրոցի հաստա- տութիւն դռնելով յառաջադիմութեան պիտի ենթարկի, և այնպէս ազգին դա- ւակները օտար դպրոցներ թափառելէ պիտի ազատին: Պարոն նամակագիր, արդեօք խիղճը չչարաչար քեզի, երբ կուտենաս աղքին զաւկները օտար դպրոցներ վարժուելով, կրօնավորու- թիւնը մուտ գտած է նախ Մարդուան, և այժմ Ամասիա: չէ մի որ, անոնք կը հայհոյեն քու մայրենի եկեղեցոյդ սըր- բաղան պաշտամունքը. գիտեմ, կրսես թէ « Ես ալ կրօնքիս նախանձախնդիր մէկը չեմ ես ». այս դիտում ես ալ կը վկայեմ թէ քու կրօնասիրութիւնդ կեղծ գործիք մ'է. քու եկեղեցի գալը միայն մուղիգայ չալել է, ինչպէս որ քու վար- ժապետութիւնդ քանի մը չորպաճիներ- րու քմացը ծառայել է, խորհրդարան- ներու մէջ ազգին վշտա նիւթելու, ա- ուսմանորդ հալածելու, եթէ երբեմն դպրոց ալ գտնուիս նէ, ինքզինդ ան- կարգ գրօսանքներու և . . . սիրահար եղած, ազգին խեղճ մանկտեաց այն թանկագին ժամերը ի զուր կ'վատենս: Պարոն նամակագիր, ասոնց ամենքը լաւ գիտես, բայց և այնպէս կհամար- ձակիս քու կեղծ գրիչը նենդամու- թեամբ գործածել. վասն զի օգնական

ունեցած պարուն Բանքայնով մէկտեղ, որ
 ահա վեց ամիսէ ի վեր ի շնորհս Պօլսոյ
 Գործատէր Ընկերութեան Ամասիա եկած
 արդէն մտադիր եղած նպատակին կշա-
 րունակէ, որ է վիճակիս Առաջնորդին
 հակառակութիւն ընել, ազգին օգտին
 ընդդիմադիր չորսպիսիներուն վարսխոյս
 և քաջալերութիւն տալ սախօսքերով,
 որ քանակէր կեցիք դաւանութեան վրայ
 եւ Եղեւսեանք ազլը ընելու կարող եմ,
 ինչպէս որ ըրի Պրուսայինը 40 զինուո-
 ղով և պիտի ընելմ Արաստիոյ նորըն-
 տիր Առաջնորդն ալ, ահա այս խօս-
 քերով քաջալերութիւն առած, այն քա-
 նի մը Եղեւսեանի օրով իրենց իշխանու-
 թիւնը չբանող չորսպիսիները վերստին կը
 յուզին. աւաղ թշուառ ամասիարեանկ
 հայոցս, փոխանակ Պօլսոյ ընկերութիւն-
 ներէն յառաջադիմութիւն և օժանդա-
 կութիւններ ընդունելու, ընդհակառակին
 սատարակ հակառակական և ոգ-
 ւով արբեալ մէկու մը յախուռն խօս-
 քերուն ունկնդրութիւն ըրած, թշուառ
 ազգին գլխուն փորձութիւնը անպակաս
 ընել կաշխատին:

Որով մնամ միշտ երախտապարտ,
 Կ. ՍՄԲԵՏ ՍԱՌԱՋԻԱՆ

Հարկաւ Ամասիոյ և Մարզուանու վիճա-
 կին մէջ խաղաղութիւնը չհաստատուիր,
 հարկաւ գերապատիւ Եղեւսեան սրբազան
 չորս անգործ վարել էք պաշտօնը և ան-
 թերի կատարել պարտաւորութիւնները,
 քանի որ տեղացի խոզվարդ և շահադէտ
 անձերէն գտա Պատրիարքարանէն ընելու
 թեան կամ խաղաղարարութեան պաշտօնով
 գնացող վարդապետ մ'ալ կիւրեղ գլխովին
 իւր պաշտաման ու պարտոց հակառակ ըն-
 թացից մէջ ձգտուել և պատնջ կրէք կը-
 ունել, աստ անգ անխտիր և անխնայ
 թեամբ գուր կուտայ թերին եկածը: Այս
 գծուարին է խաղաղութիւն և համաձայնու-
 թիւն հաստատել այս վիճակին մէջ, քանի
 որ սեբաստացի Բասթալ Թաշեան Յարու-
 թիւն անուն անձն, երբեմն Եղեւսեանի երկ-
 նտեարք ճատագողն, առանց երբէք անձա-
 կան գործ և գրադուս ունենալու, Ամասիոյ
 և Մարզուանու մէջ կթափանի և իրեն գործ
 ըրած է արդէն խոզվարդները գրգռել, և
 Եղեւսեան սրբազանը յաշս վիճակայնոց ա-
 անկ ընելու, և Պատրիարքարանը ահաբե-
 լու սուտեր ու խաղաղութիւններ կեղծել:
 Մեծ եղաւ մեր գործանքը, երբ այս Պ. Բաս-
 թալին մէկ հեռագիրը տեսանք հինգ շաբթի
 սուր Մանգուսի մէջ, զոր կարծեմք առ
 Պատրիարքարան ալ ուղղել յանդգնէր է:
 Այս անգործ ու դատարկաբերկ ազգասէրն
 ու ժողովող պէրն այսու հեռագրով ի լուր
 աշխարհի ազգակ ու աղմուկ կ'արուցանէ
 ըսելով թէ Է ժողովուրդը պիտի փոխէր իւր
 կրօնը: Պատրիարքարանի կողմանէ ընելաց
 գրութեանց պատասխան շարուելուն հա-
 մար, սակայն ընելաց յորդորանօք ետ կե-
 ցաւ առ այժմ, և ուրիւ անգամ առաջըն
 տունը անհար է թէ դարձեալ անպա-

տասխանի մնաւ նոցա գրութիւնը: Ահա
 այս հին ու փոտած սուրբէ, որ մեր Պ. Բաս-
 թալն ի բացուած կողմացունէ ընդդէմ Պատ-
 րիարքարանի, երբէք չդիտնալով թէ սեբաս-
 տացի անգործի մի Ամասիայէն կամ Մարզու-
 անէն տեղական խոզվարդ մը համար դրած օր-
 չափ կարեւորութիւն կատանայ Պատրիար-
 քարանի կողմանէ, մանաւանդ երբ այսպի-
 սի սուրով մի երեւան կեցիք և դիտնելը
 ահաբեկելու փորձ կ'որոճէ:

Կյուսանք, թէ այս սեբաստացի Պ. Բա-
 րութիւնի կորուստ Պատրիարքարանէն, որ
 Ամասիոյ խոզվարդ միջամտելէ և գրգռութե-
 նէ հիւսի կենայ:

Կլանք թէ առ Եղեւսեան վարդապետ ար-
 դէն մտերմաբար գրուած է Երուսաղիմայ
 Պատրիարքութեան փոխանորդ գերապատիւ
 Տ. Խորէն վարդապետի կողմանէ, որ խո-
 ճեմութեամբ վարուի և ընկնէր ու ընկնէր
 լաւ կռիւ:

Կիւրեղ վարդապետ եթէ անգայ ուղ-
 դութեան այս հրաւերին, յապաղային կը-
 նայ օգտակար լինի: Պէտք է գիտնալ թէ
 այլ է վանական կեանքն, այլ է քաղաք-
 կանք, և մանաւանդ արժան է գիտնալ թէ
 խօսք մի որչափ ալ ճանախու լինի, երբէք
 կարեւորութիւն չունենար երբ հայհոյախա-
 նքն է:

Այսօր ալ այսչափ: Տեսնե՛ք, ուրիշ ինչ
 անհաճոյ առիթ կ'ստիպէ զմեզ դարձեալ Ա-
 մասիոյ խոզվարդ վրայ խօսելու:

Կլանք, թէ Պօլսոյ պատուարժան
 քահանայից ամանք նկատելով որ քահա-
 նայական դասը ընդհանրապէս գծուծ
 վիճակի մէջ կգտնուի, և քահանայական
 կոչումը ընդունողները մեծաւ մասամբ
 անուս ու անինչ կարգէ անձինք են,
 որոշիր են ժողով մի կազմել և առա-
 ջարկել Ս. Պատրիարք Հօր, որ ի պաշ-
 տօն քահանայութեան հրաւիրէ բարո-
 յական ու նիւթական կարողութեանց
 տէր ազգայիններէն խոռոչ մի, և այս
 պէտ աղմուկացունէ քահանայական դո-
 սը, որով ոչ սակաւ օգուտ ընծայած
 կըլլայ համօրէն Ազգիս:

Գոհութեամբ լսեցինք պատուար-
 ժան քահանայից ոմանց այս խորհուր-
 դը: Յաջողութիւն կ'մտայ թէ Ս. Պատ-
 րիարքը եթէ յառաջ տանի այս խորհուր-
 դը, քարդարեւ Ազգին համար խիստ
 օգտակար գործ մի գործած կըլլայ:
 Բիշ ժամանակ է որ քահանայական
 դասն անբարոյ անհաճոյ վիճակին մէջ կը
 գտնուի, և այս առաջին անգամ չէ որ
 խորհուրդ և առաջադրութիւն կըլլայ
 աղմուկայնիկ այս դասը, բայց պէտք ե-
 ղածն ի գործ դրուած չէ: Ժամանակաւ
 մեր հարուստ ազգայնոց ոմանք, կար-
 ծեմք, մինչեւ անգամ ուխտ ըրին իւր-
 եանց որդւոց մին ի քահանայութիւն ըն-
 ծայել, բայց գործադրութիւնը չտես-
 նուեցաւ: Մտածուորապէս կ'իշխեմք նօ-
 րատունկեան մեծապատիւ Սիմոնիկ է-
 ֆէնտին, կարծելով թէ այսպիսի ուխտ
 ընողներուն գլխաւորն եղած է: Ար-
 դեօք անպատուութիւն կըլլայ նորա-
 տունկեան գերդաստանին, եթէ Սիմո-
 նիկ էֆէնտի կատարէ իւր ուխտը՝ եթէ
 արդարեւ ըրած է:

Ունէինք նշանաւոր քահանայ մի,
 որ նիւթական բաւականութիւն ունենա-
 լով քահանայական հասութիւց աչք չու-
 նէր և միայն աղքատին հարսանեկան
 ու դամբանական հանդէսներուն ձրիա-

բար ներկայ կգտնուէր, բայց անցեալ-
 ները երկինք կոչեց զնա:

Այս տողերով երբէք նպատակ չու-
 նիմք նախատակած առնել քահանայա-
 կան ներկայ ամբողջ դասն, որովհետեւ
 կան անոնց մէջ արժանաւորք մայլ կու-
 ղեմք իմացունել թէ արդարեւ նոր կար-
 զադրութիւնք անհրաժեշտ պէտք են,
 որպէս զի այս դասն տակաւ մեծաւ մա-
 սամբ քարձրանայ և աղմուկանայ:

Պօլսոյ մաքսատան բեռնակիր յար-
 դոյ ազգայինք վաղը հացկերոյթ պիտի
 տան ազգային հիւանդանոցի նպատա-
 պարելոց:

Այս առթիւ յատկապէս Ս. Պատա-
 րազ պիտի մատուցանէ իզմիրեան ար-
 ժանապատիւ Տ. Մատթէօս վարդապետ
 Հիւանդանոցի մատրան մէջ, և Աղթա-
 մարայ խայատուր Սրբազան աւ ներկայ
 պիտի գտնուի:

Եղեւս ազգայինք քանի մը տարիէ
 հետէ այսպէս կ'մտիթարեն պատարա-
 եայնորը, մինչեւ օրիշ տարիներ տեղ
 մը ժողովելով, միայն իրենք կերուխում
 կընէին:

Ս. Էլմիածնի վեհախառ Հայրապե-
 տին կողմանէ կոնդակ մի ուղղուէր է
 Պրուսա առ Սահակ էֆէնտի Եամլիբեանի
 որ գեր. Տ. Բարթողիմէօս Ս. Արքեպիս-
 կոպոսի հակառակորդաց գլխաւորն է:

Այս կոնդակը վաղը պիտի կարգաց-
 ուի հանդիսաւոր կերպիւն Հեռուարար
 առաջիկայ թղթատարով կընամք ճիշդ
 տեղեկութիւն տոտնալ պարունակու-
 թեանը վրայ Սակայնք գծուարին չէ մեզ
 այժմէն դուշակել իմաստը: Ս. Հայրա-
 պետը անտարակոյս իւրէր և ի խաղա-
 ղութիւն յորդորած է Եամլիբեան էֆէն-
 տին և Պրուսայի բոլոր պատուարժան
 Հասարակութիւնը, որ բաւական ատե-
 նէ հեռեւ խաղաղութեան ու երկպառա-
 կութեան մէջ կգտնուի և առանց հով-
 ուական խնամոց մնացած է անոք մոռ-
 անօգնական:

Ստապ համբ թէ Հայրապետական
 այս յորդորն ազգեցութիւն կընէ երկու
 կողմանց վրայ ալ, և միանալով կ'իտնըրեն
 իւրեանց գերապատիւ Առաջնորդը և
 կ'մտցուի անցեալը որ ոչ նուազ աղե-
 տաղի եզար: Իմաստք խոսմ. ցո՛ զան
 ընդամենս Է Ստապ ցո՛ զան
 իւրեցիկայ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սհաւասիկ Բուսէլի երկաթուղոյն
 բաժնետոմսերուն հինգշաբթի աւուր վի-
 ճակահանութեան արդիւնքը:

Թիւ	Տիրութիւն
1,138,878	600,000
1,000,864	60,000
614,475	20,000
1,712,750	20,000
12,732	6,000
49,507	
727,461	
1,056,877	
1,270,203	
1,589,746	

3000 ական ֆրանգ շահեցան		
41,404	246,985	466,136
536,781	727,465	885,404
956,124	1,000,865	1,158,880
1,515,097	1,651,551	1,856,017
4000 ական ֆրանգ շահեցան		
952	12,781	49,506
49,508	150,705	262,154
549,859	614,472	729,557
757,253	768,084	768,085
885,045	956,125	1,005,104
1,047,968	1,091,729	1,185,452
1,276,111	1,402,057	1,402,059
1,515,098	1,594,515	1,595,405
1,615,402	1,656,019	1,656,020
1,781,885		

Երկուշաբթի առաւ թուով պիտի նշանակուի 400 ական ֆրանգ վաստող թիւերը :

Երէկ բարձրատիճան պաշտօնատարաց ոմանք թաղան-թաղ բարձրապատիւ մեծ կարգով ասպարանքը ժողովեցան, և կարեւոր խնդրոց վրայ խորհրդակցութիւն եղաւ :

— Չնուորական գործոց նախկին պաշտօնեայ Հիւսէյին Աղլի փաշա՝ այսօր, իսկ Շիրվանի գատէ Մէհմէտ Ռիշտի փաշա վաղը մայրաքաղաքս կսպասուին :

— Անգղիացի մի սկսած է մրցիլ Աղլիէի իրմիտ բանող շաքենաւոց հետ : Երգենաւ կրանցունէ, միայն 5 զուրուշ առնով ճամբորդներէն և միանգամայն իւր ալ տալով, մինչդեռ Աղլիզնէն յոգենաւները իւր չեն տար և մէկ արծաթ մէճիտ կառնուն :

Պարսկաստանի մէջ այս տարի ալ արմտեաց նուազութիւն լինելով, կկարծուի թէ այս տարի ալ ժողովուրդը դարձեալ սովով պիտի տանջուի, եթէ կանխաւ պէտք եղած պատրաստութիւնները չլինան :

Յունաստանի թաղաւորը մտերս փարիզ պիտի երթայ : Փարիզի հեղինական դեսպանատունը պատրաստութիւններ կտեսնէ :

Անգղիայէն վիէննայի արուեստահանդէսը զրկուելիք կարասեաց համար կազմուած յանձնաժողովին նախագահը՝ նոյն իսկ թագու հւոյն գահաժառանգն է :

— Հասկէյաստանի մէջ ալ զօրաց համար նոր տեսակ հրացանի մը գործածութիւնը սկսուեր է, անգղիացւոց խորհրդով :

— Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ պատերազմական հարկի և ուրիշ պայմանաց լրանալէն յետոյ, այսինքն երբ Գաղղիա գերմանական զօրաց ձեռքէն բոլորովին ազատի՝ երեսփոխանական ժողովն անբողպպէս պիտի սրուի և նոր ընտրութիւն պիտի ըլլայ :

— Մօտերս Ամերիկայի մէջ 100 տարեկան մարդ մը մեռեր է, որ խաբէբայութեան մէջ խիստ նշանաւոր ըլլալուն համար ասկէջ 25 տարի յառաջ Հնդկաստանէն վանտուեր է, իբրեւ գըրամական պատիժ՝ 40 հազար ըրիւր առնուելով :

Այս առաքինի մարդը Ամերիկայի մէջ ալ բաւական գործ տեսեր է, շտտ

մը յափշտակութիւններ ընէլէն զատ 7 հոգի ալ սպաններ է :
Ահաւասիկ, անմահ յիշատակաց արժանի մարդ մը :

ՇԱՆՈՒՑՄՈՒՆՔ ՅՈԹՈԿՐԱՅ

Գ. ՄՈԶԵՍԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՄԱՀՄՈՒՏ-ՓԱՇԱ ՐԱՍՏԳԻՃԸ-ՓՈՂՈՑ ԹԻՒ 1
ԲԻՒՐԳՃԻ-ԽԱՆԻ-ԴԵՄԸ

Յօթօկրաֆի. Մողեան պատիւ ունի ծանուցանել արդոյ Հասարակութեան թէ Յուլիս 1 էն սկսեալ Կ. Պօլիս Մահմուտ-փաշա Բաստըգիճը-փողոց թիւ 1 Լուսանկատունը փոխադրած է իր գործարանը ուր պատրաստ է ամեն օր իրեն դիմող յաճախողները առաւօտէ մինչեւ երեկոյ ընդունել որոնք ըստ ամենայնի գոհ ընելու համար ամեն պատրաստութիւնք ըրած է :

Կիրակի և տօն օրերն ալ բաց է այս լուսանկարատունը :

Լուսանկարչութեան արհեստը քիչ ժամանակի մէջ կատարելապէս սովորել փափաքողք ալ կրնան Գ. Մողեանի դիմել :

ՆՈՐ ՎԻՃԱԿԱԶԱՆ ԵՒ ԵՐԱԶԱԶԱՆ ԸՍՏ ԲՆՈՒԹԵԱՆ

Արաբերէն հին ձեռագրէ թարգմանուած և չորս հատորի բաժնուած :

Առաջին հատորը մամլէն ելած է որուն մէջ պարունակին հետաքրքրութեան արժանի շատ մը օգտակարութիւններ, գլխաւորաբար մարդկային արեան յատկութեան ու զօրութեանը վրայ բացատրութիւններ, առուտուրի մէջ ղէն չընելու և միշտ շահելուն գաղաւնիքներ եւայլն :

Կծախուի կամուրջի դիւրուն պարագան և ամեն հայ դրամաճառաց քով :
Գին 4 դրուշ :

Մեծ նոր խանի վերի դուռը թիւ 3 սենեակը գաղղիարէն ու տաճկերէն լեզուաց և տոմարակալութեան դասախօսութիւն կըլլայ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը :
Գաստուն այրելութեամբ ալ դասախօսութեան կերթայ :
3

ՆԱՐԵԿ ՄԵԾԱԴԻՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ ՓԱՐԻՉ

Գին մէկ քառորդ մէճիտից է

Դավափեան դրատան մէջ աժան գըներով կը ծախուին հետեւեալները :

Աւորան	5	շաբաթ
Եւել	5 1/2	»
Եւել	5 1/2	»
Նարէի Արաբեան	6	»
Փանջ	10	փարայ
Իերական հարդ	10	փարայ
Հեբարան	15	»
Սաղան	5	շաբաթ
Պարսկական հարդ	4	օրեակ
4 շաբաթ	5	շաբաթ
7 շաբաթ	10	շաբաթ
Պարսկական թուղայի արժարան	10	շաբաթ
Դործոց	6	շաբաթ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՑԵՏԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՐ

Ա. Տիւմայի այս անգուղական վիսպասանութեան երրորդ և վերջին հատորն ալ Պօլիս հասած ըլլալով, արդոյ բաժանորդներէն կը խնդրուի որ իրենց անդորրագիրը ներկայացնեն Չաղմաղ՝ ճըլար-եօղուշու թիւ 10 Տէտէեանց վաճառատունը և անկէ ստանան նոյն հատորը :

Գին ամբողջ գործին 45 դրուշ :
Իւրաքանչիւր հատորի գին 15 :

ՏԻՒՐՊԻՆԻ ԱՇԳ

ՄԱՀՊՈՒՊԵՅԻ ՄԻԷԷԼ

Սիրային և հետաքրքրաշարժ վիպասանութիւն մ'է, որ պիտի բաղկանայ 10 տետրերէ՝ շաբաթ առ շաբաթ հրատարակուելով : Իւրաքանչիւր տետրին գինը 2 դրուշ է :

Առաջին երկրորդ և երրորդը հրատարակուած են և կծախուի մայրաքաղաքիս դրամաճառաց խանութները : Ըրաքիր ծախողներու քով և կամուրջի գըրի Պարագան :

Բասաթոն Փեշաբաճեան՝ երկու հատոր մեծադիր Սյո հայկազնեան բառարանը որ ծանանակէ մը յառաջ երկու տաճկական ոսկիի կը ծախուէր, այժմ գրեթէ միայն կազմի գինով կէս օսմանեան ոսկիի սկսած է ծանուիլ Գալափեան և Յըլնիկան գրատունները :
Բասից ճոխութեան ու բացատրութեանք պատճառաւ գործածողը չարէն աւելի գոհ կրնայ ընել :

Պետրոս Գուրեանի գործոց հրատարակիչ մասնաժողովը ներկայիս կը յայտարարուի ազգային բանասիրաց թէ՛ նոյն վաղմուսնիկ հեղինակին երկասիրութեանց տղա գրութեան ձեռնարկին ի գըրիս համար՝ ինչպէս որ խոստացած էր նախորդ յայտարարութեամբ մը :

Հրատարակութիւնը կը բաղկանայ 500 երես ու թածալ հատորէ մը՝ որ կը պարունակէ հինգ ընտիր թատերական և լեզուական անտեղծական հեղինակութիւններ :

Մէկ հատորոց գինն է 1 1/2 արծ. մէճիտ իսկ բաժանորդաց համար 1 մէճիտ :
Կը ծախուի Գալափեան և ամեն գրավաճառաց քով :

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆԶԻ

1. Միայն շաբաթ օրերը կը հրատարակուի :
2. Տարեկան բաժանորդացինն է միայն երկու արծաթ մէճիտ կանխիկ վճարել թէ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ գաւառաց համար :
3. Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախք կտրուցութիւնը պիտի վճարէ :
4. Հատը 40 փարայ է և կզտուի ամեն 2այ դրամաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով :
5. Մանուցան տողը 40 փարայ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամեկու համար :
6. Իմացրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղի առ Տիւրքի-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պօլիս Գիւրգէի խան վարի յարկ թիւ 26 :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԻՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՍԷՓ ԳԱՎԱՅԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ ԲԻՒՐԳՃԻ ԻՍԿ ԿԱՐԻ ԹԻՒ 26